



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

394



392

2(075)  
U-15

## ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

[Ա. ՏԱՐԵ

ովւ ուսուածիք որդւոց  
„Ճերոց խօսել զնոսա ի  
„նոսել ի տան, եւ ի  
„զնալ ի ճանապարհի եւ  
„ի ննջել եւ ի յառնել“:  
Վ. Մովսես. Ժա, 19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՌԳԻԻ ՀԱԳԵՒԹԻՐ ԲՈՒՐԵԱԿԹԵՐԻ

Կազմակերպության  
Առաջնախառնության  
(Միարան Մաղնուց Ա. Գևորգ և կեղեցւոց)

Յարմար է կրօնուապյներին ձեռքի տակ ունենալ  
իմ «Դասագիրք կրօնի» II հատոր մասն ա. և բ.

220  
618-ԱՀ

Թ. Ի. Գ. Լ. Խ. Ա.  
պատ. Պ. Շարամիկի. || Տիպ. Մ. Ռարաձե.  
1892

618-ԱԿ

ԴԱՎԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

21075)

U-15



Ա. ՏԱՐԻ



Հայոց  
Հանունի  
Հայոց  
Հայոց  
Հայոց

„Եւ ուսուածիք որդւոց  
„ձերոց խօսել գնոսա ի  
„նստել ի տան. եւ ի  
„դնալ ի ճանապարհի եւ  
„ի ննջել եւ ի յառնելու:  
Վ. Մովս. ժա. 19.



ՀԱՄԲՉԵՑՆ ԾՐԵԳԻԲԻ ՀԱԳԵՒՈՐ ԻԹԽԸՆԵՈՒԹԵՑՆ

Եազմ էց

ՍԱՀԵԿ ՔԸՀ. ՍԱՀԵԿԵԱՆՅ  
(Միաբան Մողնուց Ս. Գ. Էպրդ Եկեղեցուց)

1004  
1961

220  
620-ԱԿ

Յարմար է կրօնուսոյցներին ձեռքի տակ ունենալ  
իմ «Գասագիրք կրօնի» II հատոր մասն ա. և բ.



Թ. Ի Գ Լ Ի Ս

Ճպարամ Պ. Ճպարամ || Տիպ. Մ. Շարաձե.  
1892

11652

Дозволено ценз., Тифлисъ, 29-го Августа 1892 г.

## ԳՐԱՄԱՆԱՒ

ՏԵՂԵԿԱՆԻ ԿԱԹՈՂՎԱԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

§ 1.

Աստուած կանչում է Աքրահամին

Խառան քաղաքում մի մարդ էր ապրում՝  
անունն Աքրահամ։ Նրա հայրը և բոլոր խա-  
ռանցիները կուռք էին պաշտում, իսկ ինքը  
ճշմարիտ Աստուածուն։ Դրա համար Աստուած  
ասաց Աքրահամին. «Թող քո հայրենիքը, բա-  
րեկամները, հօրդ տունը և գնա՞ այն երկիրը,  
որ ես քեզ ցոյց կտամ. ես քեզ կօրհնեմ. քո  
որդկերանցից մինը դուրս կգայ և կօրհնէ  
երկրիո վրայի բոլոր ազգերին»։

Աքրահամը հեռանում է Խառանից։ Այ-  
քանից յետոյ Աքրահամն իսկոյն դուրս եկաւ  
Խառանից. Հետն առաւ իւր կին Սառալին,  
եղբօրորդի Ղովախն, ծառաներին, իւր հարըս-  
տութիւնը և գնաց Քանանացւոց աշխարհը,  
որ Աստուած խոստացել էր նրան։

Երբ Աքրահամը Քանան հասաւ, Աստուած  
նորից երևեցաւ Աքրահամին և ասաց. «Ա՛յ,  
սա է այն երկիրը, որ ես քեզ խոստացայ.

այս երկիրն ընծալում եմ քեզ և քո որդւոց»:

Սբրահամն այնտեղ մի սեսան շինեց, զոհ արաւ Աստուծու համար և շնորհակալութիւն արաւ:

### § 2.

#### Աստուած յիշում է իւր խոստումը

Աստուած Սբրահամին խոստացել էր, որ նրա որդիկերանցից մինը դուրս կդայ և կօրհնէ երկրիս վրայի բոլոր ազգերին:

Այդ օրից անցել էր երկու հազար տարի։ Աշխարհիս բոլոր մարդիկը վատացել էին այնպէս, ինչպէս մի ժամանակ Խառանի բնակիչներն էին։

Աստուած մարդկանցը շատ էր սիրում. քանի քանի անգամ մարդարէներ ուղարկեց, որ խրատեն նրանց, բայց մարդիկը չլսեցին նրանց։ Աստուած յիշեց իւր խոստումը և ուղարկեց իւր միակ որդի Յիսուս Քրիստոսին, որովհետև նա միայն կարող էր վատ մարդկանց բարի գարձնել։

Լսեցէք, հիմա ես պիտի պատմեմ, թէ Աստուած ինչպէս ուղարկեց իւր որդուն։

### § 3.

#### Աւետումն քրիստոսի:

Քանանացւոց երկրում, ուր մի ժամանակ Սբրահամն էր կենում, մի քաղաք կարանունը՝ Նազարէթ։ Այնտեղ մի կոյս աղջիկ կար, որի անունը Մարիամ էր։ Նա շատ բարի էր և ամեն ժամանակ Աստուծուն աղօթում էր։ Աստուած նրան ընտրեց, որ Յիսուս Քրիստոսի մայրը լինի։

Մի անգամ երբ Մարիամն աղօթում էր, Գաբրիէլ Հրեշտակը երևաց նրան և ասաց. «Ուրախացիը Մարիամ, Աստուած քեզ հետ է»։ Երբ Մարիամը Հրեշտակին տեսաւ, վախեցաւ և մտածում էր իւր մտքում, թէ ինչ կնշանակէ այս ողջոյնը։ Հրեշտակն ասաց. «Մի վախեցիր, Մարիամ, Աստուած քեզ շատ է սիրում, դու մի որդի կունենաս և նրա անունը Յիսուս կդնես։ Նա Աստուծոյ որդի կը կոչուի. նա բոլոր մարդկանց փրկիչը պիտի լինի»։

Մարիամը չհակառակեց և խոնարհ կերպով պատասխանեց. «Ես Աստուծոյ աղախինն եմ, ինչպէս նրա կամքն է, թող այնպէս էլ կատարուի»։ Այս պատասխանից յետով Հրեշ-

տակը հեռացաւ Մարիամից:

Գաբրիէլ Հրեշտակի Մարիամ կոյսին առետիք տալը տօնում ենք ապրիլ ամսի 7-ին։ Այդ տօնի անունն է Աւետումն։

§ 4.

Քրիստոսի ծնունդը:

Հին ժամանակ, երբ թագաւորներն ուղում էին իմանալ, թէ իրանց երկրի մէջ քանի մարդ կայ, հրամայում էին որ ամեն մարդ գնայ իւր հայրենի հաղաքը և ապա սկսում էին համարել։ Այսպիսի մի հրաման էլ դուրս եկաւ Օգոստոս Կայսրից՝ հէնց այն ժամանակներում, երբ Յիսուս Քրիստոսը պիտի ծնէր։

Յիսուսի ծնողներ՝ Յովաէփին ու Մարիամը կենում էին Նազարէթ քաղաքում։ Բայց որովհետև Յովաէփը Բեթղեհէմցի էր, այդ պատճառով վերկացաւ և շտապով եկաւ իւր հայրենի քաղաքը։ Յովաէփն աղքատ էր. քաղաքի մէջ չկարողացաւ տուն վարձել. վեր եկաւ քաղաքից դուրս մի ալրի մէջ, ուր հովիւները վատ եղանակին իրանց հօտերն էին բերում։

Այդ գիշեր Մարիամը մի որդի ունեցաւ։ Ծնողները խանձարուրի մէջ փաթաթեցին և դրին մսրի մէջ։

Բեթղեհէմը մեր երկրի նման ցուրտ չէ, այնտեղ տաք է—ձմեռը դլսում կարելի է քնել։ Այն երկրի հովիւները ամառ ձմեռ իրանց ոչխարները դուրսն են քնացնում, միայն անձրւելին եղանակին հօտերը ալրն են բերում։

Երբ Յիսուս ծնաւ, օդի մէջ հրեշտակ երևաց։ Այս բանից հովիւները վախեցան։ Հրեշտակն ասաց. «Մի վախենաք, ես ձեզ և բոլոր մարդկանց մէծ ուրախութիւն եմ յալտնում—ձեզ համար Բեթղեհէմում փրկիչ է ծընել։ Նա ալրումն է, խանձարուրով պատաժ և մսրի մէջ դրած»։ Այս խօսքերից յետոյ յանկարծ մի խումբ հրեշտակներ երևացին, որոնք երգում էին և ասում. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն»։—Փառք Աստուծուն երկընքումը, ալսուհետև երկրիս վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն պիտի լինի։

Հրեշտակները հեռացան։ Հովիւներն ասացին մէկ մէկու. «Գնանք Բեթղեհէմ և տեսնենք այս ինչ բան է, որ Աստուծած ցոյց

տուաւ մեզ»: Նրանք շտապով եկան և գտան  
Մարիամին, Յովհէփին և մանկանը, որին փա-  
թաթել էին խանձարուով և դրել էին մսրի-  
մէջ: Երբ տեսան, փառք տուին Աստուծուն:

### Յ ա ղ ծ ն ն դ ե ա ն

Այսօր տօն է ծննդեան, աւետիս,  
Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս,  
ծնաւ երեր զանմահ արքայն, աւետիս:  
Այսօր հրեշտակը յերկնից իջան, աւետիս,  
Հնդ մեզ օքհնեն զանմահ արքայն, աւետիս:

Այսօր մեր Տիրոջ ծննդեան տօնն է, աւետիս,  
Այսօր մեր Տիրոջ յայտնութեան տօնն է, աւետիս:  
Այսօր անապական սուրբ կոյսը ծնաւ, աւետիս,  
Եւ բերաւ անմահ թագաւորին, աւետիս:  
Այսօր հրեշտակները երկնից իջան, աւետիս,  
Մեղ հետ օրհնում են անմահ թագաւորին, աւետիս:

### Ծ ա ր ա կ ա ն ծ ն ն դ ե ա ն

Խորհուրդ մնծ եւ սքանչելի,  
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,  
Հովհիւք երգեն ընդ հրեշտակն՝  
Տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ  
՚Ի թեթրեհէմ քաղաքի,  
Որդիք մարդկան օրհնեցէք,  
Զի վասն մեր մարմնացաւ:  
Անքաւելին երկնի եւ երկրի  
՚Ի խանճարուրս պատեցաւ,  
Ոչ մեկնելով ՚ի Հօրէ  
՚Ի սուրբ այրին բազմեցաւ:

Մեծ և զարմանալի խորհնուրդ է, որ այսօր  
յայտնուեց—հովիւները հրեշտակների հետ եր-  
գում են և աշխարհին աւետիք տալիս:  
Նոր թագաւոր ծնաւ թեթրեհէմ քաղաքում,  
մարդկանց որդիք, օրհնեցէք, որովհետև նա մեզ  
համար ծնաւ:

Նա, որի համար երկինք և երկիրը բաւա-  
կան չեն, բարուրի մէջ փաթաթւեց. Հօրիցն ան-  
բաժան մալով սուրբ այրի մէջ բազմեց:

### § 5.

### Յամն երկու տարեկան Յիսուսը գնում է տաճար

Հրէաները մեզ նման ամեն քաղաքում  
կամ գիւղում եկեղեցիներ չունեին, ամբողջ  
երկրի մէջ մի հատ տաճար կար, այն էլ Երու-  
սաղէմ դաղաքումն էր: Հրէաները կարծում

Եկն թէ միայն Երուսաղէմի տաճարում կարելի է աղօթել, եթէ ուրիշ տեղ աղօթեն, Աստուած չի լի: Դրա համար ամեն տարի անթիւ ուխտաւորներ էին գալիս, մանաւանդ Զատկի տօնին: Ուխտաւորներն այնքան շատ էին լինում, որ քաղաքի մէջն այլ ևս տեղ չէր լինում, քաղաքից դուրս՝ լեռների վրայ վրաններ էին խփում: Տօնը եօթն օր էր տեսում:

Որովհետեւ մեծ բազմութիւն էր հաւաքւում դրա համար էլ փոքրերին ուխտ չէին տանում մինչև որ տասն երկու տարեկան չդառնալին, որովհետեւ փոքրերը կարող էին մոլորուել բազմութեան պատճառով:

Ամեն մի բարեպաշտ հրէայ, գոնէ տարին մի անգամ պիտի Երուսաղէմ ուխտ գնար, Յիսուսի ծնողներն էլ Զատկի տօնին ամեն տարի ուխտ էին գնում: Երբ Յիսուս տասն երկու տարեկան դարձաւ, նրան էլ հետները տարան: Այս առաջին անգամն էր, որ Յիսուս գնում էր Աստուծու տունն աղօթելու:

---

Տաճարից վերադառնալը: Տօնի օրերն անցան: Ծնողները կամենում էին Նազարէթ դառնալ, բայց լանկարծ տեսան, որ Յի-

ոուս մանուկն այլ ևս չկար: Քաղաքի մէջ երկար փնտռեցին, բայց իզուր: Կարծում էին թէ ծանօթների հետ Նազարէթ դարձած կլինի, դրա համար մի օրուայ ճանապարհ եկան. գտան իրանց ծանօթներին. Հարց ու փորձ արին, տեսան որ չկայ: Նորից լետ դարձան Երուսաղէմ: Մի օր էլ այստեղ փնտռեցին և հազիւ երրորդ օրը տաճարում գտան:

Յիսուսն այստեղ վիճաբանում էր վարդապետների հետ—նրանց հարցեր էր տալիս և պատասխանում առաջարկած հարցերին: Ամենքըն էլ զարմանում էին նրա իմաստուն պատասխանների վրայ:

Ծնողներն այս որ տեսան, շատ ուրախացան: Մայրն ասաց: «Որդեակ, այդ ինչ բերիր մեր գլխին. Հալրդ և ես այս երեք օր է քեզ փնտռում ենք»: Յիսուս պատասխանեց. «Միթէ չգիտէիք, որ ես իմ հօր տանը կլինեմ»: Սրանից լետոյ Յիսուս ծնողների հետ Նազարէթ դարձաւ և հնազանդ էր նրանց:

---

Փոքրիկ մանուկներ, դուք էլ Յիսուսի նման պիտի սիրեք Աստուծու տունը և հնազանդ լինէք ձեր ծնողներին:

§ 6.

**Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ա**

Յիսուս գալիս է Յովհաննիսի մօտ: Յորդանան գետի ափերում մի մարգարէ էր բնակւում Յովհաննէս անունով: Մարդիկ ամեն կողմից սրա մօտ էին գալիս, իսորհուրդ էին հարցնում և պատմում էին իրանց սխալները: Յովհաննէսն ամենին մի մի ճանապարհ էր ցոյց տալիս Ով իւր սխալները խոստովանում և խոստանում էր այլ ևս չկրկնել, Յովհաննէսը նրան լրդացնում մկրտում էր Յորդանանի մէջ: Սրանով Յովհաննէսն ուզում էր ասել, ինչպէս որ ես մարմինը մաքրեցի, դուք էլ ձեր սիրտը պիտի մաքրէք:

Յիսուս ևս եկաւ Յովհաննիսի մօտ մըկրտուելու: Դեռ չէր մօտեցել Յիսուս, Յովհաննէսը հեռուից ճանաչեց նրան և բարձր ձայնով ասաց իւր մօտ կանդնողներին. «Ա, Հա գալիս է Աստուծու գառը, սա պէտք է մարդոց ազատէ իրանց մեղքերից»:

Յիսուսը մօտեցաւ Յովհաննիսին և յալտնեց, որ կամենում է մկրտուել: Յովհաննէսը մերժեց և ասաց. «Ես պէտք է քեզանից մըկրտուեմ, դու ես ինձ մօտ գալիս: Յիսուս

պատասխանեց. «Մկրտիր ինձ, այսպէս պէտք է կատարուի արդարութիւնը—այժմ ինձ խոնարհելու և քեզ հօր Աստուծու կամաց հնագանդելու ժամանակ է, այժմ պիտի յալտնուի իմ վրկիչ լինելը աշխարհին: Սրանից յետով Յովհաննէսը չհակառակեց և մկրտեց Յիսուսին:

Հրաշը: Երբ Յիսուս մկրտուեց. ջրից դուրս եկաւ, երկինքը բացուեց. սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ, իսկ երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի, դրան լսեցէք»: Նատ քիչ մարդիկ գիտէին, որ Յիսուս Աստուծու որդին էր, բայց այժմ պարզ կերպով տեսան, որ Հայը Աստուծ ինքը յալտնեց այդ: Դրա համար էլ մկրտութեան օրը՝ մարդիկ իրար շնորհաւորում են ասելով «շնորհաւոր յալտնութիւն»:

Յիսուսի մկրտութեան տօնն ամենայն տարի կատարում ենք յունվարի 6-ին:

§ 7.

**Մ Ա Ր Ի Ա Մ Ե Ւ Մ Ա Ր Թ Ա**

Յիսուս ըժշկում է: Յիսուս իւր մկրտ-

տութիւնից յետոյ սկսեց զբջել երկրի մէջ և  
ամեն տեղ քարոզում էր և բժշկում — կոյրե-  
րին աչք էր տալիս. կաղերին ոտք. խուլերին  
լսողութիւն և մեռելներին յարութիւն էր տա-  
լիս: Ով տխուր էր, մխիթարում էր. Հարուտտ-  
ներին առում էր, որ իրանց ունեցածից աղ-  
քատներին էլ բաժին հանեն: Վատ մարդկանց  
խրատում էր, որ լաւանան, ապա թէ ոչ Սո-  
տուած կպատժէ: Ալսպէս Յիսուս օր ու գի-  
շեր հանգիստ չունէր, զըջում էր ամեն տեղ  
և քարոզում էր մարդկանց, որ վատ բանե-  
րից հեռանան և լաւ բաներ անեն: Ինչ որ  
խօսքով քարոզում էր, նոյնը գործով ցոյց էր  
աալիս:

Յիսուս գալիս է թեթանիա: Այսպէս  
մի անգամ Յիսուս քարոզելով եկաւ իւր ծա-  
նօթ Ղազարոսի մօտ, որ կենում էր Բե-  
թանիա գիւղում՝ Երուսաղէմին մօտիկ: Այս  
Ղազարոսը երկու քոյր ունէր, մինի անունն  
էր Մարիամ. իսկ միւսինը Մարթա: Երկու  
քոյրերն էլ Յիսուսին շատ էին յարգում: Երբ  
իմացան, որ Յիսուս հիւր է եկել, էլ չգիտէին  
թէ ինչպէս պատիւ տան նրան: Մարիամը նրա-  
տեց Յիսուսի մօտ և ուշադրութեամբ լսում  
էր նրա քարոզները: Յիսուսի խօսքերն այն

աստիճան դուք եկաւ Մարիամին, որ նա ամենայն ինչ մոռացաւ: Իսկ Մարթան մեծ պատրաստութեան մէջն էր—աշխատում էր որքան կարելի է լաւ կերպակուրներ պատրաստել Յիսուսի համար:

Մարթան երբ տեսաւ, որ Մարիամը չի  
գալիս իրան օգնելու, դարձաւ Յիսուսին և  
բարեկամաբար ասաց. «Տէ՛ր, չե՞ս տեսնում, որ  
քոյլս ինձ մենակ է թողել, ասա՛, որ ինձ օգ-  
նէ»: Յիսուս պատասխանեց. «Մարթա, Մար-  
թա, դու շատ բաներով ես զբաղւում, քիչն  
էլ բաւական է: Դու կարող ես քո քոյլ Մա-  
րիամից օրինակ վերցնել, նա աւելի լաւ ձեռվ  
է պատում ինձ, նա լառմ է իմ քարոզնե-  
րը—ով ինձ ուզում է յարգել, թող իմ խօս-  
քերը լսէ»:

Սըանով Յիսուս ուզում է ասել, որ Մարիամի չափ լսենք, իսկ Մարթայի նման աշխատասէր լինենք:

§ 8.

Յիսուս քարոզում Ե

Մկրտութիւնից լետով Յիսուս եղեք տա-



ըի շարունակ քարոզում և ուսուցանում էր Յիսուս չեր սիրում այն մարդկանց, որոնք ուրիշներին ծածուկ խաբում էին, բայց երեսանց այնպէս էին ցոյց տալիս, որ նրանց բարերարներն են: Յիսուս իւր քարոզութիւններով ցոյց էր տալիս իւղձերին, որ իրանց խաբում են:

Դրա համար էլ այդ մարդիկը Յիսուսին չեին սիրում և աշխատում էին նրան վնասել:

### § 9

#### Յ Ո Ւ Թ Ա

Յիսուսի աշակերտներից մինը, որի անունը Յուդա էր, լաւ մարդ չեր, փող շատ էր սիրում: Սա ծածուկ գնաց քահանայապետների մօտ և առաց. «Խնձ Բնչ կտաք, որ Յիսուսին ձեզ մատնեմ»: Նրանք էլ երեսուն արծաթ խոստացան: Յուդան որոնում էր մի լարմար օր, որ Յիսուսին մատնէ թշնամիներին:

Յիսուս գիտէր այս բանը, բայց ոչինչ չեր ասում, աշխատում էր մի ձեռով զգուշացնել աշակերտին: Բայց ի զուր: Յիսուս տեսաւ որ Յուդան վիտի մատնէ և իւր մահը մօտենում է, ուզեց մի անգամ էլ իւր բոլոր աշակերտների հետ միասին Զատկի ընթրիքն ուտել և վերջին անգամ ցոյց տալ նրանց իւր սէրը:

### § 10

#### Ո Մ Ն Ա Լ Ո Ւ Թ

Հրէաները Զատկի տօնին բաղարջ հաց էին ուտում, դրա համար էլ այդ օրը կոչում է և բաղարջակերպ տօն: Երեկոյեան երբ սեղան նստաւ տասն երկու աշակերտների հետ, Յիսուս ասաց. «Նատ սիրով ցանկացալ այս ընթիքիքը ձեզ հետ ուտել՝ չարչարւելուցս առաջ»: Այս ասելուց յետով, Յիսուս ընթրիքից վեր կացաւ. հանեց շորերը. մէջքին մի զենջակ կապեց. ջուրն ածեց կոնքի (աւազան) մէջ և սկսեց աշակերտների ոտները լուանալ ու այն զենջակովը սրբել: Ոտները լուանալուց յետով ընթրիքի նստաւ և տիսուր ձայնով առաց իւր աշակերտներին. «Ձեզանից մինը պիտի ինձ մատնէ»: Յիսուս սրանով վերջին անգամ կամենում էր իրան մատնող աշակերտին զգուշացնել, բայց ի զուր:

Աշակերտներն այս խօսքի վրայ տրտմեցան և միմեանց երեսին էին նայում, չգիտէին թէ ում համար է ասում: Այսեն մէկն առանձին առանձին տեղից վեր էր կենում և ասում էր. «Տէր միթէ ես եմ»: Յիսուս պատասխանեց. «Խնձ հետ պիտի պատահի այն բոլորը, ինչ որ մարդկաները գրել են, բայց վայ այն մար-

դուն՝ որ կմատնէ ինձ, աւելի լաւ էր, որ նա իսկի ծնուած չլինէր»։ Այն ժամանակ Յուղան էլ ասաց «Միթէ ես եմ, վանդապետ»։ Յիսուս պատասխանեց. «Դու ես ասում»։ Յուղան երբ տեսաւ որ իւր մատնութիւնը գիտէ Յիսուս, ամօթից էլ չկարողացաւ մնալ այնտեղ, այլ՝ վերկացաւ և գնաց. Երեկոյ էր—մթնել էր։

### Շարական ոտնալուայի

Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան՝ ի թողութիւն մեղաց մերոց։

Մկրտութեան աւազանն այսօր հաստատւեցաւ, մեր մեղքերի թողութեան համար։

Այսօր Տէրն մեր լուսանայր զոտս աշակերտաց եւ բարբառէր զայս ասելով։

Ելսօր մեր Տէրը՝ Յիսուս լուսանում էր աշակերտների ոտները և պատուիրելով ասում էր.

Մի ոմն՝ ի ծէնջ, ասէ, եղբարք, մատնելոց էք զիս առ՝ ի մահ եւ որոշի յաշակերտացդ։

«Չեղանից մէկը, եղբայրներ, ինձ մահուան պիտի մատնէ և բաժանուի (հեռանայ) աշակերտներիցդ։

Զայս լուեալ Պետրոսի՝ ակնարկէր առ Յովհաննէս, հարցանէր թէ ով իցէ դաւաճանող վարդապետին։

Այս որ լսեց Պետրոս, նայեց Յովհաննիսին՝ հարցնելու, թէ ով կարող է լինել դա։

Բանն զոր ասաց Յիսուս, տրտմեցոյց զիւր զաշակերտսն եւ խոռվեցան ամենեքեան։

Այս Խօսքը որ ասաց Յիսուս, աշակերտներին տրտմեցրեց և ամենքը շփոթւեցան։

### § 11.

#### ԽՈՐԻՌԴԱԼՈՐ ԸՆԹՐԻՑ

Երբ Յուղան դուրս գնաց, Յիսուս ասաց. «Ձեզ մօտ երկար չեմ կարող մնալ նոր պատուիրան եմ տալիս ձեզ—դուք իրար այնպէս պիտի սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի—սրանով ձեզ ամենքը կճանաչեն, որ իմ աշակերտներն էք»։

Յիսուս կամեցաւ իւր մահուանից լետոյ մի այնպիսի լիշտապակ թողնել, որ երբ ինքն այլ ևս երկրի վրայ չի լինիլ, իրան միշտ լիշեն, միտք բերեն։ Ուստի ընթրիքից լետոյ առաւ հաց. օրհնեց. կտրեց. աշակերտներին բաժանեց և ասաց. «Առէք, կերէք այս է իմ մարմինը—այս կատարեցէք իմ լիշտապակի համար»։ Յետոյ բաժան առաւ, գոհացաւ. տուաւ նրանց և ասաց. «Խմեցէք դրանից ամենքդ,

սա իմ արիւնն է, որ թափւում է ձեզ և շատ  
ուրիշների մեղքին թողութիւն տալու համար  
— ամեն անգամ, երբ խմէք այս բաժակից,  
լիշեցէք ինձ:

Պատարագ: Առաջուայ քրիստոնեանե-  
րըն ամեն օր հաւաքւում էին և լիշում էին  
Յիսուսին, այսինքն Հացը ճաշակում էին և  
գինին խմում: Մենք էլ այժմ ամեն տէրու-  
նական և տօն օրերին սուրբ պատարագ ենք մա-  
տուցանում և բարեպաշտ քրիստոնեակք դը-  
նում են եկեղեցի, քահանալին խոստովանում  
են և պատարագից լետոյ ընդունում հաղորդը,  
բաղարջ Հացի և գինու տեսակով: Սա միե-  
նոլնն է, ինչ որ Յիսուս Քրիստոս վերնատա-  
նը կատարեց:

Պատարագին շատ երգեր են երգում,  
բայց նրանցից մի քանիսը միայն կսովորենք:

Յամենայնի օրնեալ ես Տէր, օրնեմք  
զքեզ, զովեմք զքեզ, զոհանամ զքէն, աղաշեմք  
զքեզ տէր Աստուած մեր:

Ամեն բանի մէջ օրհնուած ես, Տէր, օրհ-  
նում ենք քեզ (որովհետև մեզ համար շատ բա-  
րութիւններ ես արել), զովում ենք քեզ (որով-  
հետև դու չարչարեցար և մեզ համար խաղա-

շութիւն բերիր), գոհանում ենք քեզնից, աղաչում  
ենք քեզ, մեր տէր Աստուած:

Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս Քրիս-  
տոս ի փառ Աստուծոյ Հօր ամէն:

Միմիայն Սուրբը, միմիայն Տէրը, Յիսուս  
Քրիստոսն է Հօր Աստուծու փառքովը. ամէն

Ամէն. Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ  
սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն  
սրբոյ, այժմ եւ միշտ յաւիտեանս յաւիտենից.  
ամէն:

Ամէն. սուրբ Հայր, սուրբ Որդի, սուրբ Հո-  
գի: Օրհնութիւնը լինի Հօրը, Որդուն և Սուրբ  
Հոգուն՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.  
ամէն:

Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ  
օրհնեալ, եկեալ անուամբ տեառն:

Մեր Աստուածը, մեր Տէրը երեւեցաւ մեզ՝  
Տիրոջ անունով եկողն օրհնեալ լինի:

Եղիցի անուն տեառն օրհնեալ յայսմ  
հետէ մինչեւ յաւիտեան:

Աստուծու անունն օրհնեալ լինի այժմեա-  
նից սկսած մինչև յաւիտեան:

§ 12.

**Յ Ի Ս Ո Ւ Տ Գ Ե Թ Ա Խ Մ Ա Ն Ի Պ Ա Ր Տ Ի Վ Ո Ւ Մ**

Հացն օրհնելուց յետոյ Յիսուս իւր աշակերտների հետ միասին դուրս եկաւ Երուսաղեմից. անցաւ Կէտրոնի ձորը և բարձրացաւ Զիթենեաց լեռով. Այստեղ Յիսուս ասաց աշակերտներին. «Ինձ պիտի բռնեն, իսկ դուք ամենքդ էլ կթողնէք ինձ և կփախչէք»: Աշակերտներն ամենքն էլ միաբերան ասացին. «Աւելի շուտով կմեռնենք՝ քան թէ քեզ կը թողնենք և կփախչենք»:

Զիթենեաց լեռան կողքին մի պարտէզ կար՝ Գեթսեմանի անունով: Յիսուս այստեղ եկաւ և ասաց իւր աշակերտներին. «Նստեցէք այստեղ. աղօթեցէք. արթուն կացէք, որ փորձութեան մէջ չընկնէք», իսկ ինքը մի փոքր առաջ գնաց. երեսի վրայ ընկաւ և այսպէս էր աղօթում. «Հայր, եթէ կարելի է, այս նեղութիւնը (բաժակը) հեռացրու ինձանից, բայց ոչ թէ այսպէս, ինչպէս ես եմ ցանկանում, այլ ինչպէս դու»: Յիսուս աղօթքից դարձաւ և տեսաւ, որ աշակերտները քնել են և նորից ասաց. «Արթուն կացէք և աղօթեցէք, որ փորձութեան մէջ չընկնէք»: Այս ասաց և դարձեալ գնաց աղօթելու և

նոյն խօսքերն էր կրկնում և օգնութիւն իմդրում հօրից: Յիսուս դարձաւ և աշակերտներին էլի քնած գտաւ ու ասաց. «Քանի քը նէք, հասաւ ժամը, երբ Յուդան ինձ պիտի մատնէ. վեր կացէք գնանք, ահա գալիս է նա»:

§ 13.

**Յ Ի Ս Ո Ւ Տ Մ Ա Տ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ո**

Սրանից յետոյ՝ Յուդան բազմաթիւ զինուորներով ներս մտաւ պարտէզ՝ սրերով ջահերով և լապտերներով: Եկողները Յիսուսին չէին ճանաչում: Յուդան նշան էր տուել, թէ ումը որ համբուրեմ, նա է, նրան բռնեցէք»: Մատնիչը մօտեցաւ Յիսուսին, համբուրեց և ասաց. «Բարեւ, վարդապէտ»: Յիսուս պատասխանեց. «Յուդա, համբուրելով ես մատնում ինձ»: Այն ժամանակ մօտեցան Յիսուսին և բռնեցին: Աշակերտները թողին և փախան:

§ 14.

**Յ Ի Ս Ո Ւ Տ ց ա հ ա ն ա յ ա պ ե տ ի ա ռ ա ջ**

Յիսուսին կապած տարան քահանալապետի մօտ, ուր ժողոված էին ամենը, որ Յիսուսի համար մահու պատիժ նշանակեն: Սուտ

վկաներ գուրս եկան, որոնք հաստատում էին, որպէս թէ Յիսուս Աստուծուն հայհոյել է: Հրէաների օրէնքով, եթէ ապացուցանէին, որ մինը Աստուծուն հայհոյել է, այնպիսի մարդը մահու պատիժ էր ստանում: Այստեղ թը քեցին Յիսուսի երեսին. բռնցքով ծեծեցին. իսկ մի քանիսն էլ ապատէ էին տալիս և առում. «Հապա իմացիր, թէ ով է քեզ խփողը»:

§ 15.

**Յ Ո Ւ Դ Ա Յ Ի Մ Ա Բ Ա**

Յուդան երբ տեսաւ, որ իւր մատնութիւնով Յիսուսի համար մահու պատիժ նշանակեցին. զղաց. խիղճը տանջեց իրան. վեր առաւ երեսուն արծաթը. յետ տուաւ քահանայապետներին և ասաց. «Ես մեղք գործեցի, անմեղ արիւն մատնեցի: Նրանք էլ պատասխանեցին, թէ մեզ ինչ, դու գիտես»: Այն ժամանակ Յուդան փողը գէն ձգեց և գնաց խեղդուեց, որովհետեւ քանի լիշում էր Յիսուսի արած լաւութիւնները և իւր վատութիւնը, չգիտէր, թէ ինչ անէր, քուն չունէր, դադար չունէր:

§ 16.

**Յ Ի Ս Ո Ւ Ս Պ Ի Ղ Ա Մ Ա Տ Ո Ս Ի Ա ռ ա ջ**

Աւագ հինգշաբթուայ գիշերն էր, որ Յիսուսի համար մահուան վճիռ նշանակեցին, իսկ լուսաբացին՝ ուրբաթ առաւօտեան՝ կապկած վեր առան, տարան Պիղատոս դատաւորի մօտ, որ իրանց վճիռը հաստատէ, որովհետեւ հրէաները իրաւունք չունէին մահու վճիռ տալու—երկը մէջ ամենից մեծ դատաւորը Պիղատոսն էր:

Պիղատոսն ինքը գուրս եկաւ նրանց մօտ և ասաց. «Ի՞նչ գանգատ ունիք այս մարդու դէմ»: Նրանք պատասխանեցին. «Աս Ժողովը դիմէն մոլորեցնում է, արգելում է կայսեր հարկ տալ և իրան թագաւոր է անուանում»: Այս որ լսեց Պիղատոսը՝ Յիսուսին ներս տարաւ իւր սենեակը, քննեց և տեսաւ որ բոլորն էլ սուտ է—նախանձում են, որ Յիսուս իրանցից լաւ է քարոզում և իրանց սխալները բռնում է ու ժողովրդին ցոյց է տալիս: Պիղատոսը գուրս բերաւ Յիսուսին և լաւանեց ժողովրդին, որ ոչինչ լանցանք չէ գտնում նրա մէջ:

Քահանայապետները և ժողովուրդը չսեցին դատաւորին, սկսեցին աղաղակել և ասել.

Եթէ դու մեր վճիռը չես հաստատի, մենք  
կայսեր գանգատ կտանք»։ Պիղատոսը վախե-  
ցաւ այս բանից—մէկ որ կայսրից վախենում  
էր և մէկ էլ չէր ուզում մի մարդու համար  
երկրի մեծամեծ մարդկանց նեղացնել։ Ուս-  
տի վեր առաւ ջուր, ձեռները լուաց և  
ասաց. «Ես Յիսուսին մեղաւոր չեմ գտնում.  
Նրա արեան մէջ իմ ձեռը չեմ թաթախի.  
Դուք գիտէք, տարէք և խաչեցէք»։ Այս բա-  
նի վրայ ժողովուրդն սկսեց միաբերան աղա-  
ղակել և ասել. «Թո՞ղ դրա արիւնը մեր և մեր  
որդւոց գլխին լինի»։

### Յ ա ր ա կ ա ն Մ ա տ ն ո ւ թ ե ա ն

Ի գիշերին յորում մատնիւր Փրկիչն մեր  
ի մահ խաչին, ել ՚ի լեռն Զիթենեաց՝ աղօ-  
թելով զայս ասէր. Հայր, անցո՛ յինէն զբա-  
ժակս:

Այն գիշեր, երբ մեր Փրկիչը պիտի մատ-  
նուէր խաչի վրայ մեռնելու, Զիթենեաց լեառը  
բարձրացաւ. աղօթելով այս էր ասում. «Հայր,  
հեռացրո՛ ինձնից այս բաժակը»

Իսկ անօրէն աշւակերտին թողեալ զգութ  
սիրոյ նորա՝ փութայր առ քահանայապետն եւ

ասէր. ինձ զինչ կամիք տալ, զի մատնեցից  
զվարդապետն:

Իսկ անօրէն աշակերտը մոռացել էր Յիսու-  
սի սէրն ու գութը, շտապում էր քահանայապետի  
մօտ և ասում էր. «Ինչ կտաք ինձ, որ վարդա-  
պետին (Յիսուսին) ձեզ մատնեմ».

Ժողովեալ հրէիցն՝ կշռեցին արծաթ բա-  
զում։ Ալեալ տարան առ Պիղատոս ասեն՝ ՚ի  
խաչ հան, ի խաչ հայրոյիչ է օրինաց։

Հրէաները հաւաքուեցան, շատ արծաթ կըշ-  
ռեցին, տարան Պեղատոսի մօտ և ասացին. «Խա-  
չիր խաչիր դրան, որովհետեւ հայհոյում է (չէ  
հաւանում) մեր օրէնքները»։

### § 17.

#### Յ ի ս ո ւ ս ի Խ ա չ ե լ ո ւ թ ի ւ ս

Ուրբաթ առաւօտ զինուորները վեր ա-  
ռան Յիսուսին և տարան, որ խաչն։ Յիսուս  
ինքն էր տանում իւր խաչափայտը. նա շատ  
էր լոգնել, որովհետեւ ամբողջ հինգշաբթի  
գիշեր չէր քնել, ուստի ճանապարհին վալր  
ընկաւ խաչի տակ։

Երուսաղէմի մէջ մի բլուր կար՝ անունը  
Գողոթա, որոշել էին, որ Յիսուսին այնտեղ

խաչեն: Խաչի վերևում մի տախտակ կար, որի վրայ Պիղատոսը գրել էր տուել Յիսուսի յանցանքը, որ ամենքը կարդան և իմանան, թէ ինչու են պատժում Յիսուսին: Տախտակի վը բայ գրած էր—«Յ ի ս ո ւ ս Ն ա զ ո վ ը ե ց ի՝ թագաւոր Հ ը է ի ց»:

Երբ Գողգոթա հասան, Յիսուսին խաչեցին—նրա ձեռները և ոտները փայտի վրայ մեխեցին: Թէև թշնամիները նախանձից խաչել տուին, բայց Յիսուս էլի աղօթում էր նըրանց համար և խնդրում էր հայր Առառնեան, որ ներէ նրանց: Զինուորները ծաղրում էին Յիսուսին և ասում էին. «Եթէ դու հըէից թագաւորն ես, ինչու չես աղատում քեզ»:

Յիսուսի խաչի մօտ էին կանգնած իւր մայրը և Յովհաննէս առաքեալլ: Յիսուս ցաւում էր մօր վրայ, ուստի Յովհաննէսին յանձնեց, որ պահէ, պահպանէ նրան և այն օրից սկսած՝ Մարիամ Աստուածածինը Յովհաննիսի մօտն էր:

Ժամը վեցին այսինքն մեր տասն երկու ժամին երկրի վրայ խաւար իջաւ: Ժամը ինչին Յիսուս ասաց. «Ծարաւի եմ»: Զինուորներից մինը խղճաց նրան. սպունքը քացախի մէջ թաթախեց և Յիսուսի շրթունքին մօտեցրեց, որ ճաշակէ և ցաւը մեղմէ, որովհետեւ

ալդ խմելիքը փոքը ինչ թմրեցնում է:

Սրանից յետոյ՝ երբ ամեն բան կատարւեց, Յիսուս բարձր ձայնով ասաց. «Հայր, հոգիս քեզ եմ յանձնում»: Այս ասաց, գլուխը խոնարհեց և հոգին աւանդեց:

Այդ միջոցին երկիրը շարժուեց, ժայռերը պատառեցան և շատ գերեզմաններից արդար մարդիկ յարութիւն առան: Այս որ տեսան, ամենքը լաց էին լինում և ասում էին, ուղիղ որ Յիսուս Աստուծու որդի էր, մենք նրան իգուր սպանեցինք:

### ԵՐԳ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Խաչի քո Քրիստոս երկիր պազանեմք եւ զուրքը զխաչելութեանդ քո մեծացուցանեմք, եւ զուրքը զթաղումդ քո փառաւորեմք:

Քրիստոս, քո խաչին երկրպագութիւն ենք տալիս, քո սուրբ խաչելութիւնը մեծացնում ենք (յարգում ենք), իսկ քո սուրբ թաղումը փառաւորում ենք:

Եկայք հաւատացեալք, երկրպագեսոյք Քրիստոսի Առողջոյ մերոյ, վասն զի եկն ի ծեռն խաչին իւրոյ շնորհեաց զպարզեւս աշխարհի:

Եկէք, ով հաւատացեալներ. երկրպագութիւն

տանք Քրիստոսին՝ մեր Աստուծուն, որովհետև նա եկաւ և իւր Խաչովն աշխարհիս պարգևներ շնորհեց:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեան մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր (Աստուած), սուրբ և անմահ (Աստուած), դու որ մեզ համար Խաչուեցիր, ողորմիր մեզ:

Փառք սուրբ խաչիդ, ալէլուեա, խաչելութեանդ, ալէլուեա, սրբոյ թաղմանդ, ալէլուեա:

Փառք քո սուրբ Խաչին, ալէլուեա, (օրհնեցէք Աստուծուն), փառք Խաչելութեանդ ալէլուեա, փառք սուրբ Թաղմանդ, ալէլուեա:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Քո երեսի լըսը փայլեց մեզ վրայ (շնորհառի մեզ) և մեր սիրտն ուրախացրիր:

'Ի պտղոյ, ցորենոյ, զինոյ եւ ծիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Ինչպէս ցորենի, գինու և ձիթոյ առասուժեան ժամանակը (տարիները)

§ 18.

Թ ա ղ ո ւ մ ն

Ուրբաթ Երեկոյեան գէմն էր: Միւս օրը՝ շաբաթ՝ հրէաների զատիկն էր—եթէ Յիսուսին խաչի վրայ տեսնէին, հանգիստ սրտով հաց չէին ուտի, ուստի գնացին Պիղատոսի մօտ և խնդրեցին, որ իրաւունք տայ մարմինը խաչի վրայից վերցնելու: Պիղատոսն իրաւունք տուաւ:

Զինուորներից մինը կամեցաւ ճիշտ իմանալ Յիսուսի մահը, դրա համար գեղարդով կողը ծակեց, որտեղից արիւն և ջուր բղիսեց: Սրանից յետոյ Յովսէփ անունով մի մարդ, որ ծածուկ աշակերտ էր Յիսուսին, եկաւ Պիղատոսի մօտ և խնդրեց, որ Յիսուսի մարմինն իրան տան: Պիղատոսը տուաւ սրան Յիսուսի մարմինը: Մի ուրիշ աշակերտ էլ՝ Նիկոդիմոս անունով, եկաւ և բերաւ անուշահոտ բաներ: Սրանցով օծեցին Յիսուսի մարմինը և կտաւով պատեցին, ինչպէս որ հրէաների սովորութիւնն էր:

Ալյտեղ՝ ուր Յիսուսին թաղեցին, մի պարտէզ կար, պարտիզումն էլ մի նոր փորած գերեզման: Ահա այստեղ դրին Յիսուսի մարմինը 3

նը և մի մեծ քար էլ գլորեցին դրանն ու գը-  
նացին:

§ 19.

**Յիսուսի յարութիւնը**

Երբ շաբաթ օրն անցաւ, Յիսուսին հետևող  
կանալքը—Մարիամ Մակթաղինացին և ուրիշ-  
ները, զանազան տեսակ անուշահոտ խնկեր  
պատրաստեցին, որ կիւրակէ օրը գան և Քրիս-  
տոսի մարմինն օծեն:

Նրանք որ եկան՝ դեռ արել չէր ծագել  
Կանալքը ճանապարհին ասում էին միմեանց.  
«Ով կգլորէ մեզ համար գերեզմանի բերնի  
մեծ քարը»: Բայց երբ մօտեցան, տեսան որ  
քարը գէն էր ձգած գերեզմանի բերանից:  
Կանանցից մինը վաղեց աշակերտների մօտ ի-  
մաց տալու այս բանը, իսկ միւս երկուսը գե-  
րեզմանը մտան և տեսան, որ մի երիտասարդ  
նստած է աջ կողմում՝ սպիտակ շորերով: Կա-  
նալք վախեցան: Երիտասարդն ասաց նրանց.  
«Դուք որոնում էք խաչուած Յիսուսին: Նա  
յարութիւն առաւ, այստեղ չէ, ինչու էք կեն-  
դանին մեռելների մէջ փնտում: Գնացէք,  
ասացէք նրա աշակերտներին, որ Յիսուս իրան-  
ցից առաջ կդնայ Գալիլիա, դուք այնտեղ կը-  
դանէք նրան»:

**Յարական յարութեան**

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուեա,  
եկայք ժողովուրդ, երգեցէք տեառն, ալէլուեա:

Քրիստոս ի մեռելոց յարութիւն առաւ, ա-  
լէլուեա, եկէք ժողովուրդ, տիրոջ համար երդ ա-  
սացէք, ալէլուեա:

Յարուցելոյն ի մեռելոց, ալէլուեա,  
Որ զաշխարհս լրտասւորեաց, ալէլուեա:

Ի մեռելոց յարութիւն առնողին, ալէլուեա,  
աշխարհս լուսաւորողին, ալէլուեա:

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք եւ  
զուրք թաղումի քո մեծացուցանեմք, եւ  
զուրք յարութիւնդ քո փառաւորեմք....

Փառք սուրբ խաչիդ, ալէլուեա,  
Սրբոյ թաղմանդ, ալէլուեա,  
Սուրբ յարութեանդ ալէլուեա:

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց. մահուամբ  
զմահ կրիստուաց եւ յարութեամբն իւրով մեզ  
կենանս պարզեւեաց, նմա փառք յաւիտեանս,  
ամէն:

Քրիստոս ի մեռելոց յարութիւն առաւ, (իւր)  
մահով յաղթեց մահուան, իսկ յարութիւնով մեզ

Կեանք պարզեց. նրան փառք լինի յաւիտեանս.  
ամէն:

Փառք քեզ տէր Աստուած մեր:

Փառք քեզ, մեր տէր Աստուած:

Հայր մեր, որ յերկինս ես սուրբ եղիցի ա-  
նուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին  
կամք քո որպէս յերկինս եւ յերկրի գհաց մեր  
հանապազորդ տուր մեզ այսօր. եւ թո՛ղ մեզ  
զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց  
պարտապանաց, եւ մի՛ տանիք զմեզ ի փոր-  
ճութիւն, այլ փրկեան զմեզ ի շարէ. զի քո է  
արքայութիւն եւ օգորութիւն եւ փառք յաւի-  
տեանս. ամէն:

Մեր Հայր, որ երկնքումն ես. քո անունը սուրբ  
լինի. քո թագաւորութիւնը գայ. քո կամքը լինի  
ինչպէս երկնքումը, նոյնպէս էլ երկրի վրայ. մեր  
ամենօրեայ հացը տուր մեզ այսօր. մեր պարտքը  
թո՛ղ մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաննե-  
րին ենք թողնում. մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ  
այլ չարիցն աղատիր որովհեաւ թագաւորութիւնը,  
զօրութիւնը և փառքը.քոնն է՝ յաւիտեանս. ամէն:



ԻՐ ԱՇԽԱՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՅԱ ԵՆ ՑԵՍԵԼ

1. ԳԱՍՏԳԻՐՔ ԿՐՕՆԻ, ուղեցոյց հայ  
կրօնուսոյցների համար. Հինգութիւնի նիւ-  
թի մշակութեանը . . . . . 1 75
  2. ԳԱՍՏԳԻՐՔ ԿՐՕՆԻ, ուղեցոյց հայ  
կրօնուսոյցների համար. նոր ու ուխտի  
նիւթի մշակութեան ա. մասն . . . . . 1 —
  3. ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ հայ կրօնուսոյց-  
ներին . . . . . — 10
  4. ՄՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հին  
ուխտի . . . . . — 40
  5. ՄՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ նոր  
ուխտի . . . . . — 40
  6. ԳԱՍՏԵՏՐ ԿՐՕՆԻ ա. տարի. — 15
  7. ԳԱՍՏԵՏՐ ԿՐՕՆԻ, բ. տարի. — 20
  8. ԳԱՍՏԵՏՐ ԿՐՕՆԻ, դ. տարի. — 30
- 10-ից աւելի գնողին և կանխիկ վճարողին  $20\%$   
զեղումն կլինի:

Հայոցէն — 1) Тифлисъ. Свяценику Сааку  
Саакянцу կոմ 2) Центральную книжную тор-  
говлю.

2013

002673

794



